



96. ՀՈՒՇ ԸՐԱՎ, ՀՈՒՇ ԶԸՐԱՎ, ՊԸՐԿԸՐՓՈԽԱՆ
ԿԸՆԵԳՅՆ ԸՐԱՎ

Մին աքյինչի մարթ ա ինում, տա տարեն տասներկու ամըես
անում ար, անում, միշտ պակաս ար ապրում: Թա ցորեն ար վա-
րում, կյարի հաց ար օտում, թա կյարի յար վարում, էլլա կյարի
հաց ար օտում: Կյեցն էլ վրել մին լավ շոր կար, վրել էլ մին
մարթու հետա հըսնում ար: Տէնակը եկալ ար վըսկուռեն տես
ինդյալ:

Ուրերան մին օր էլ էտ մարթը կնգանն ասում ա.—Ա՛ կնեգի,
հինշան ա”, վրեր ըխշադում ըմ, ըխշադում, վրել մաղըեն կլոխն
ա մին պեն ինգյոնմ, վրել էլ մաղըեն տակեն ա պեն ուրզամ,
ցորեն ըմ վարում, կյարի հաց ըմ օտում, կյարի յըմ վարում, էլլա
կյարի հաց ըմ օտում: Կնեգին ասում ա.—Թու հար ապրե, էտ
նրանա յա, վրեր քու քուր քըզաքումն ուրան լավ չի պահում,
տրա հետե յել մըեր հացը կյարի յա տընոնում, թա նըզանում
ըս, քու քվոր անա նըզաց:

Մին օր էտ մարթը քյինամ ա քաղաք, նի մննում քվորը
տուր: Թուրն ախպորը վրեր տընենում ա, շատ ա ուրիսանում,
հըրցնում ա շենան, ուրան ըպրուտան, ըխշըդանքան: Ախպըերն
ամմեն հինշ նազլ ա անում: Էն էլ ա նազլ անում, վրեր կնեգին
ասալ ա: Թուրն էտ վրեր ըսկանում ա, մաննը կծում ա, ասում.—
Վրեր իտի յա, տղաս քըզնըհետ կըտանես շենը, հացըտ ցորեն ա
տընըլական: Էտ տղեն էլ քըզաքումը քաշալ ըն իլալ ըսելիս:

Էրկու օրան ետն էտ մարթը քաշալը յոր ա օնում, կյամ շենքր՝
էտ օրան քաշալը նան ուրան դային բիրաղի քյինամ ըն հանդ,
բիրաղի կյամ:

Մին օր էլ քաշալն ուրան դայում նհըետ հանդ քյինամիս քամակ ա ինպյանմ, քյինամ տանան մոտե կյողը կենում, տըեսնում քյուխվրեն տղան կյամ ա դայում տոն, խիլլան կենում, տոն կյամ: Տոն կյամիս քըռըկնգանն ասում ա.—Սօր քյինանական ըմ հանդ, մխըրե վար կա ընելի, իմ եղանցըս մինին չակատը սիպտակ ա, էն մինին փորեն տակն էլ ա սիպտակ, հըսցանան վլեր արեսնաս, զիիդան վլեր ես ըմ, կըկյաս:

Թաշալն էտ վլեր ըսկանում ա, վազ ա տամ հանդ, դայում անա մին յալլեխ յոր օնում, եղանը ճակատը պըհնդ կապում, էն մին եղանը փորեն տակավն էլ ուրան հալավն ա կապում: Դայում վլել մին պեն չի ասում:

Թաշալը կեսօրան մոտե եշում ա, տըեսնամ քըռակենը ամմըեն հինչ լըլլենիսում կապած կյամ ա: Մարթը մնամ ա զարմացած, ասում ա.—Ա՛ կենգյ, էտ վլեհ'ր խալա յա, վլեր մըզետե հաց ըս պերալ: Կենգյն ասում ա.—Դե հինչ անըեմ, քըդաքու սովլըրած տղայա, պիտի օտըրե, վլեր պեն անըե: Թաշալն ասում ա.—Իմ քըռակեն շնորթով կենգյ ա, տըես հավը հինչ լավ էլ իփալ ա, ամմա մըզափում, վլեր ըրաղեն ըստըքանեն մինը մննան քցալ ա: Նստում ըն մին լավ օտում-խմում, եր կենում ըսկսում վար անըելը:

Քըռակենը վլեր տոն ա քյինամ, քաշալը կարս հըղըցավ քյինամ ա պիցրաննում սուրփ ծառեն հըշեն զաթը, մաշը նի մննում, ընդընդան մենակ քըեթը տուս օնում: Քըռակենը կյամ ա ծառեն ըռաշին լոքում, աղոտկ անում, ասում. Եկա՛յ, ա քըթավուր սուրփ. իմ իրեսը քու վլեթանըտ տակը, տու քաշալն ան ուրան դայում տանըես, քյուխվրեն տղըեն պահես: Թաշալը ծառեն հըշեն զաթան սան ա անում.—Դո՛ւ, գո՛ւ, գո՛ւ...: Քըռակենը պյոնգոնմ ա, թա սուրփը ուրան ընդունան ա, ասում ա.—Հա՛, իմ իրեսը քու վլեթանըտ տակը, մին մատաղ ըմ վիզավ օնում, վլեր քաշալը նան ուրան դային տանըես, հացըս կըհըլալվե:

Քըռակենը քյինամ ա տոն, քաշալը՝ դայում կոշտը:

Էն մին օրը քաշալը դայինն զարկում ա հանդ, ինքը քյինամ տանը քըշտին կյողը կենում, տըեսնում քյուխվրեն տղան եղավ: Նի յա մննում տոն, քըռըկնգանն ասում.—Ա՛յ անաստված, ըրկե սոված մընուալ ըմ, վլերդե՞ղ ըս իլալ: Տա թա՝ անիծած քաշալն ինձ խափալ ա: Ըսկսում ա նազլ անըելը, հինչ վլեր եղանը յիրան

տըեսալ առ Թյուիսվրեն տղան ասում ա. — Էս դինքմը ինձնը ուտը-
ելավ թյիննակամ ըմ, ինձնը թյուիսվրեն յիրա կըկլասւ:

Եթափ օրը թյուիսվրեն տղան ինձնը ուտըելավ թյինամ ա, քա-
շալն էլ հետան ինձնը թյուիսվրեն հըվաքում ա, տանում ուրանց
հըրցավը վրեր ըծելավ թյինամ հանդի: Թըռակենն էլ էրկու յալիկն
կապած, ինձնը հետավը թյինամ ա, հըսնում հանդ Թաշալը
վրեր տըեսնում ա, ասում ա. — Արևը վկա, իմ թըռակեն վըեսկե
կնեգի ա, հերան պիտի տիինիս թըրցոքեն մին թային յիրա, վըես-
կեն էլ ածես էն մին թայը, ծիբլ տաս, ըրկորդան էլ յոր օնըես:

Թաշալն ուրան ծըեռքավը լըլլըննեն պից ա անում, տըես-
նում էս դինքմ ճոխտն էլ լափի ամմընն հինչավ լիզմը: Դային նան
տղան նստում ըն ոին լավ օտում-խմում, եր կենում թյինաք
վարն անում:

Թըռակընը վրեր տոն ա թյինամ, թաշալը կարճ հըրցավ հըս-
նում ա սուրփի ծառը, պիցը անում հըշեն դաթումը կյողը կենում,
մենակ թըհթը տոն օնում: Թըռակենը կյամ ա սուրփի ծառըն տա-
կեն շոքում, ըսկում աղոտկ անընլը. — Վա՛յ, ա՛ թըթավուր սուրփի,
տու թըշալեն ան ուրան դայուն տանըես, թյուիսվրեն տղըեն պա-
հես: Թաշալը ծառեն դաթան սաս ա անում. — Գո՛ւ, գո՛ւ, գո՛ւ...
Թըռակենը դաշանք ա անում, ասում. — Ա՛ թըթավուր սուրփի, տու
իմ աղոտկը ըսկաց, թյուիսվրեն տղըեն պահեն:

Աղոտկան ետը թըռակենը թյինամ ա տոն, թաշալը՝ հանդ,
դայում կոշտը:

Էն մին օրը թաշալը դայուն հանդ ա զարկում, ինքը տանը
կյողը կենում: Տըեսնում ա թյուիսվրեն տղան եկավ, Թըռուկնզանը
մուտանում ա, թա՛ այ անաստված, էրեգի ինձ սոված ըսպընեցեր,
պա թեղ հինչ ը՞մ ասալ: Տա թըշալեն օյինը լոխ նազ ա անում:
Թյուիսվրեն տղան ասում ա. — Սօր հանդ լըմ թյիննական, նըղա-
ցած ըմ, տըեղը քցի, պրանվրեմ, միսըր դինջանամ: Տա տըեղը
քցինմ ա, թյուիսվրեն տղան պրանվում ա, թունավ հընցնում:

Ետնան թըռակենը կյամ ա եղ ածում թըթավուրեն մաշը, տի-
նձն կրակեն, վըեր յըղըծու անըե, ինքը թյինամ ճհկըրը Թաշալը
կյողը կացած տըեղան տոն ա կյամ, թթավուրը կրական յոր օ-
նում, դադ իլած եղը պիրում ածում թյուիսվրեն տղըեն պերանը,
էլլա կյողը կենում:

Թըռակենը ճիրան կյամ ա, տըեսնում թյուիսվրեն տղան եղը
«իմալ ա», մըեռալ Մնամ ա շաշմիշ իլած: Տես ա թյինամ-կյամ,
մազըերը քանդում, տեն ա թյինամ-կյամ, մազըերը քանդում, ըսկ-
սում լաց ինիլը: Թաշալը նի յա մննում տոն, թա էտ հինչ ա»:

Քըռակեն, քյուփսվրեն տղան մըեռալ ա, քարը փորեն, լաց մի ի-
նիլ, ետ քշերը կըտանեմ հորանց զարադամեն հուրթավը քցիմ մաժ
դոլ, ետ տըեռնամ: Քըռակենը թա՝ զե տըես իլի, տըես հի՞նչ ըս
անում:

Քաշալը քշերեն կեսին քյուփսվրեն տղըեն մեյզը տանում ա
հորանց զարադամեն հուրթավը քցիմ մաժ դոլ, ետ տըեռնում,
կյամ քըռըկնդանն ասում.—Տու մին մըեծ պարկու մնան կաշվի
փոխան կարել տո, վըեր կյենաս, մինչև ծույներըտ հըսնե, ետնան
վըեր ըսկըսես լաց ինիլն ու ծույներըտ թակըելը, պարկը պեցուր
սաս ա ըննական, լոխնանան լավ էլ քու լացիտ սասն ա տուս
կյիլական:

Քըռակենը մին մըեծ կաշվի պարկա փոխան ա կարում, կյե-
նում: Փոխանեն նոնդը կյամ ա հըսնում մինչև ծույները:

Քշերավը շենումը լոխ գյունդում ըն, վըեր քյուփսվրեն տղըեն
ըսպանալ ըն, քշերեն կեսին հուրթավը քցալ զարադամը: Մարթիթը,
կընաներյ, լոխ կյամ ըն քյուփսվրեն տոն, ըսկում լաց ինիլը:
Էտ կնեզյն էլ ա քյինամ լաց ինոնմ, համ ծույները վըեր թակում:
Քաշալն էլ քյինամ ա մին զրադ տըեղ վըեննը կնեզյն էտ սասը պեց
թողում: «Հո՞ւ ըրա՞վ, հո՞ւ ըրա՞վ, պըրկըփոխան կնեզյն ըրավ»,
«Հո՞ւ ըրա՞վ, հո՞ւ ըրա՞վ, պըրկըփոխան կնեզյն ըրավ»:

Լոխ հշում ըն, տըեսնում պըրկըփոխան կնեզյն էտ ա, տրան
փոխում ըն մին կյիթ հորու հաբյվա կապում, նորուն թակում, պեց
թողում: Ծորեն ժառս ա ինոնմ, վաղ-վազ անում, սըրերավ-քուկե-
րավ փըխնը-փախնի անում: Էտ կնգանը ծըեռքը պուկվում ա, ին-
գյունմ մին տըեղ, վըեննը պուկվում ա, ինգյունմ մին օրիշ տըեղ.
Կլնիսը պուկվում ա, ինգյունմ մին օրիշ տըեղ, ջամդակը շան փայ
տըեռնում:

